ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 ապրիլի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

42
(3251)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԶՈՐԱՀԱՆԴԵՍԻ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իշխանությունները նախատեսում են մայիսի 28-ին՝ Հայաստանի Առաջին Հանրապետության օրվա առթիվ, Հանրապետության հրապարակում անցկացնել լայնամասշտաբ զորահանդես: Ըստ նույն աղբյուրի՝ նախատեսվում է ցուցադրել վերջին տարիներին ձեռք բերված ամբողջ զինտեխնիկան՝ փորձելով ստեղծել տպավորություն, թե իբր վերջին տասնամյակներում նման ծավալի սպառազինում չի իրականացվել:

Եթե այս տեղեկությունը հաստատվի, ապա ստացվում է չափազանց ուշագրավ եւ խոր հակասություններով լի պատկեր: Խաղաղության օրակարգի մասին ամեն օր խոսող, իրեն «խաղաղության կուսակցություն» ներկայացնող իշխանությունը, փաստորեն, պատրաստվում է հենց մայրաքաղաքի կենտրոնում զինտեխնիկայի ցուցադրությամբ քաղաքական ուղերձ հղել հանրությանը: Ընդ որում՝ ոչ միայն արտաքին լսարանին, այլեւ առաջին հերթին ներքին սպառման համար՝ ցույց տալու, թե իր օրոք բանակաշինության եւ սպառազինման աննախադեպ փուլ է եղել:

Այս փորձը, ըստ էության, նաեւ քաղաքական համեմատության փորձ է: ՔՊ-ն ակնհայտորեն ձգտում է իրեն նույն հարթության մեջ դնել այն շրջանի հետ, երբ պաշտպանության, բանակի, պետականության եւ հաղթանակի գաղափարները մարմնավորվում էին Վազգեն Սարգսյանի ժամանակների պետական մտածողության մեջ: Սակայն այստեղ կա մի հիմնարար խնդիր. նման համեմատությունը չի կարող համոզիչ լինել, երբ այն արվում է ոչ թե նույն արժեքային համակարգի, այլ դրա գրեթե հակառակ քաղաքական վարքագծի պայմաններում:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հայկ Սարգսյանը երեկ իր հայտարարություններով խաթարել է ողջ ՔՊ խմբակցության ու վերնախավի անդորրը: «Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրները փոխանցում են, որ երեկ ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստի, այնուհետեւ ճեպազրույցի ժամանակ Հայկ Սարգսյանի հայտարարությունները սկսել են անհանգստացնել ՔՊ վերնախավին: Բանն այն է, որ Հայկ Սարգսյանը մեղադրեց Անդրանիկ Քոչարյանին, այնուհետ Սուրեն Պապիկյանին՝ բանակում առկա խնդիրների մասին բարձրաձայնելով: Նրա հայտարարությունները, ըստ աղբյուրների, դուրս են եկել ներխմբակցական ընդունված սահմաններից եւ դարձել են քննարկման առարկա իշխանության տարբեր մակարդակներում: Հայկ Սարգսյանն անուղղակի մեղադրեց նաեւ Ալեն Սիմոնյանին իր նախագծերի տապալման համար՝ հայտարարելով, թե ասում են՝ «վարչապետ եք բերում վրեքներս»: Այսինքն՝ վարչապետը Հայկ Սարգսյանին սատարում է, բայց Ալեն Սիմոնյանին չի պատժում: Այս թեմայով խմբակցությունը բաժանվել է մի քանի խմբերի. մի խումբը նրանք են, ովքեր ներքին քննարկումներում պաշտպանում են Սարգսյանին, մի հատվածի կարծիքով չպետք է այս նախընտրական փուլում Հայկ Սարգսյանը նման սկանդալային հայտարարություններով հանդես գար, մի մասն էլ համարում է, որ պետք է Քոչարյանն ու Սիմոնյանը պատժվեն ներկուսակցական ինտրիգների համար: Ի դեպ, Հայկ Սարգսյանը իր ելույթներում բաց տեքստով հայտարարում է, որ Նիկոլ Փաշինյանն իր «թիկունքին» է ու իր ոտքի տակը ակնհայտորեն փորում են Ալեն Սիմոնյանն ու Անդրանիկ Քոչարյանը:

ՀՀ դատախազության 2025 թվականի տարեկան հաղորդագրության մեջ ներառված տվյալները ցույց են տալիս, որ դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվություն նախաձեռնելու ուղղությամբ կատարված աշխատանքը, մեղմ ասած, տպավորիչ արդյունք չի տվել: Ըստ հաղորդագրության՝ դատախազությունը 2025-ին արդարադատության նախարարին ներկայացրել է 17 հաղորդում՝ դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցով: Թվով սա ավելի շատ է, քան 2024-ին ներկայացված 11 հաղորդումը: Սակայն թվի աճը արդյունավետության աճ չի նշանակել: 17 հաղորդումից 8-ի դեպքում վարույթ հարուցելը մերժվել է, 3-ը դեռ քննարկման փուլում են, իսկ 6 հաղորդման հիման վրա հարուցված 6 կարգապահական վարույթից 5-ը հետագայում կարճվել են: Ի վերջո, ամբողջ տարվա ընթացքում միայն 1 դեպքով է հարցը հասել Բարձրագույն դատական խորհուրդ, եւ դրա արդյունքով դատավորին հայտարարվել է ընդամենը «խիստ նկատողություն»: Այսինքն՝ եթե դատախազության ներկայացրած 17 հաղորդումները դիտարկենք որպես դատական համակարգում կարգապահական խնդիրների վերաբերյալ ահազանգ, ապա դրանց ճնշող մեծամասնությունը որեւէ իրական հետեւանքի չի բերել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Երեւանի փոխքաղաքապետ Լեւոն Հովհաննիսյանի վերջին տարիների հայտարարագրերը եւ պարզել նրա գույքային ու եկամտային պատկերը: Լեւոն Հովհաննիսյանը 2021 թվականի դեկտեմբերի 28-ին նշանակվել է Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ, իսկ արդեն 2023 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Երեւանի քաղաքապետի տեղակալ: Մինչ այդ նա աշխատել է բանկային համակարգում՝ «Զարգացման հայկական բանկ»-ում, «Արդշինբանկ»-ում եւ «ՎՏԲ Հայաստան բանկ»-ում՝ զբաղեցնելով ֆինանսական շուկաների եւ գանձապետարանի ոլորտին առնչվող տարբեր պաշտոններ: 2018 թվականին ընտրվել է Երեւանի ավագանու անդամ, հետագայում ղեկավարել է ֆինանսավարկային հանձնաժողովը, ինչպես նաեւ ներգրավված է եղել միջազգային ծրագրերում: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2024 թվականի հայտարարագրի համաձայն՝ Հովհաննիսյանը Երեւան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում ունի բնակարան, որը ձեռք է բերել 2017 թվականին: Նրա կողմից «ՕՐԴ ԴԵՎԵԼՈՓՄԵՆԹ» ՍՊԸ-ին տրված եւ վերադարձված փոխառությունը կազմում է 25,412,280 դրամ: Բանկային հաշիվների մնացորդները կազմում են ընդհանուր 2,508,483 դրամ, իսկ կանխիկ դրամը՝ 3,000,000:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԿԱՐԾՈՒՄ ԵՄ, ՈՐ ՓԱՍՏԵՐԸ ԽԵՂԱԹՅՈՒՐՎՈՒՄ ԵՆ»

Armlur.am-ը զրուցել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավար Արտակ Հովակիմյանի հետ:

-Պարոն Հովակիմյան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող Դավիթ Անհաղթ այգու բարեկարգումը, հավանաբար տեսել եք, համացանցում լայն քննարկման առարկա է դարձել: Մասնավորապես, հասարակական գործիչ եւ բլոգեր Արթուր Չախոյանը տեսանյութ է տարածել՝ նշելով, որ դուք նախընտրական շոու-ծրագիր եք իրականացնում: Նրա խոսքով՝ ամեն ընտրությունների ժամանակ բնակիչներին խոստանում եք, որ այգին կբարեկարգվի, սակայն դա չի իրականացվում: Կխնդրեմ այս մասով պարզաբանում տալ:

-Նախ ուզում եմ նշել, որ մինչեւ այս պահը Դավիթ Անհաղթ այգու համար պետական բյուջեից նոր գույքի ձեռքբերման նպատակով որեւէ գումար չի ծախսվել: Մենք դիմել ենք քաղաքապետարան, եւ ավագանու նիստով մեզ տրամադրվել է 150 միլիոն դրամ, որպեսզի այգու համար անհրաժեշտ գույք ձեռք բերվի: Ինչպես խոստացել ենք Քանաքեռ-Զեյթունի բնակիչներին, այնպես էլ հիմա կրկին ասում եմ՝ այս տարի այգին բացվելու է եւ ծառայելու է մեր բոլոր բնակիչներին:

-Պարոն Հովակիմյան, Արթուր Չախոյանը նաեւ նշում է, որ ամեն ընտրությունից առաջ բնակիչներին խոստումներ են տրվում, սակայն դրանք չեն իրականացվում: Ինչո՞ւ է այսպիսի տպավորություն ստեղծվել:

-Միանշանակ կարծում եմ, որ փաստերը խեղաթյուրվում են: Սա որեւէ նախընտրական գործընթացի հետ կապ չունի, որովհետեւ դեռ 2022 թվականից մենք պայքարում ենք, որպեսզի այդ այգին վերադարձնենք համայնքին: Այդ տարածքը շատ դժվարությամբ հետ ենք բերել Երեւան համայնքին, լուծարել ենք նախկին պայմանագիրը եւ այժմ քայլ առ քայլ իրականացնում ենք բարեկարգման աշխատանքները:

-Այսինքն՝ կարծում եք, որ տարածվող տեղեկությունները իրականությանը չե՞ն համապատասխանում:

-Այո՛, միանշանակ: Եթե որեւէ մեկը իսկապես սրտացավ է համայնքային գույքի նկատմամբ, թող աջակցի նաեւ մյուս տարածքների վերադարձման գործընթացներին: Մենք արդեն մեծ աշխատանք ենք կատարել՝ 14 400 քառակուսի մետր տարածքը վերադարձնելով համայնքին, եւ այժմ այն պատրաստվում է ծառայել բնակիչներին:

-Կարո՞ղ եք նշել, թե կոնկրետ երբ է նախատեսվում այգու բացումը:

-Հաշվի առնելով եղանակային պայմանները եւ ընթացող աշխատանքների տեմպը՝ ամեն ինչ անում ենք, որպեսզի առաջիկա 4 ամսվա ընթացքում մեր բնակիչներն արդեն կարողանան վայելել այգին: Բոլորից շատ ես եմ ցանկանում, որ այն հնարավորինս շուտ բացվի:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

76,4%-Ը ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ

Որքանո՞վ եք հավանություն տալիս հետեւյալ քաղաքական գործիչների եւ ինստիտուտների գործունեություններին, ըստ GALLUP International Association-ի իրականացրած հարցումների՝ այս պատկերն է ստացվել. Հայ Առաքելական Եկեղեցու գործունեությանը լիովին հավանություն է տալիս հարցվածների 64,1%-ը, 12,3%-ը ավելի շուտ հավանություն է տալիս, ՀՀ բանակին հավանություն է տալիս 59,7%-ը, լիովին հավանություն է տալիս 17,2%-ը:

ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս հարցվածների 34,2%-ը, 26,4%-ը՝ ավելի շուտ հավանություն է տալիս: Ուժեղ Հայաստանի առաջնորդ Սամվել Կարապետյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս 27,23%-ը, ավելի շուտ հավանություն է տալիս 16,6%-ը: Նիկոլ Փաշինյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս 27,1%-ը, ավելի շուտ հավանություն է տալիս 15,4%-ը: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս 13,1 %-ը, ավելի շուտ հավանություն է տալիս 11 %-ը: ԴՕԿ կուսակցության առաջնորդ Վարդան Ղուկասյանին լիովին հավանություն է տալիս 11,2%-ը, ավելի շուտ՝ 9%-ը, Վահագն Խաչատուրյանին լիովին հավանություն է տալիս 9,7%-ը, ավելի շուտ՝ 12,8%-ը: Միասնության թեւեր քաղաքական նախաձեռնության լիդեր Արման Թաթոյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս 9,7%-ը, ավելի շուտ հավանություն է տալիս՝ 13%-ը: ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի գործունեությանը լիովին հավանություն է տալիս հարցվածների 7,1%-ը, ավելի շուտ հավանություն է տալիս՝9,9%-ը:

Ըստ հարցման արդյունքների՝ 18,9%-ի համոզմամբ՝ Հայաստանում մարդիկ միանշանակ վախենում են իրենց կարծիքը բարձրաձայն արտահայտելուց, 46,6%-ի կարծիքով՝ միանշանակ չեն վախենում:

ԱԶԴԱՐԱՐԵՑ

ԱԺ «Պատիվ ունեմ» դաշինքի պատգամավոր, Արցախի Հանրապետության նախագահի նախկին խորհրդական Տիգրան Աբրահամյանի ֆեյսբուքյան գրառումը. «Իշխանությունն Անդրանիկ Քոչարյանի շուրթերով ազդարարեց զինծառայության վերաբերյալ իր բանաձեւը: Ա. Քոչարյանն իր տղայի՝ բանակում չծառայելու վերաբերյալ հարցին ի պատասխան արձագանքել է. «Իմ տղայի չափ գիտելիք դուք էլ ունենայիք, չէիք ծառայի. նա բարձրակարգ մարդ է»:

Իրենց տղաները մեծ գիտելիքներ ունեն, ըստ այդ տրամաբանության՝ «բարձրակարգ» են, եւ դրա համար էլ բանակում չեն ծառայում:

Պարզ է, չէ՞, սրանց կարծիքն ու մոտեցումը մեր զինծառայողների մասին: Քոչարյան Անդրանիկը իշխող ռեժիմի դեմքն ու ցուցիչն է, որը բացահայտում է իշխանության իրական վերաբերմունքը բանակի ու զինծառայողների նկատմամբ: Այն պետությունը, որը չի գիտակցում հայրենիքի պաշտպանի դերն ու առաքելությունը, պարզապես ապագա չունի:

Հ.Գ. Անդրանիկ Քոչարյանների քաղաքական ներկայությունն է, որ մեր երկիրն ու բանակը պարտությունների եւ ծանր կորուստների այս կետին է հասցրել»:

ՑԱՎՈՒՄ Է

ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանի ֆեյսբուքյան գրառումը.

«Սիրելի՛ հայրենակիցներ, Ապրիլի 6-ին ԱԺ-ում ճեպազրույցի ժամանակ ՀՀ զինված ուժերում ավագ որդուս կողմից ծառայություն չանցնելու մասին լրագրողի հարցին իմ պատասխանով նպատակ ունեի ընդգծել, թե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որքան են արժեւորվում կրթությունը եւ գիտական գործունեությամբ զբաղվելը, որ անձանց, որոնք ունեն պետությանն իրենց գիտական ներուժով ծառայելու պատրաստակամություն, տրված է նման հնարավորություն: Իմ երկու որդիներից ավագն անցել է անհրաժեշտ կրթական բոլոր աստիճանները եւ զբաղվում է գիտությամբ, իսկ կրտսեր որդիս ծառայել է ՀՀ զինված ուժերում եւ մասնակցել 44-օրյա պատերազմին:

Ցավում եմ, որ պատասխանս տարակարծությունների եւ շահարկումների տեղիք է տվել, ինչի համար ներողություն եմ խնդրում»:

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐ

Առաջարկվում է առողջության համընդհանուր ապահովագրության ենթակա խմբերի մեջ 2027 թվականի հունվարի 1-ից ներառել էլեկտրոնային հարթակով իրականացվող ուղեւորափոխադրման ծառայության փոխադրողներին (վարորդներ):

Ընդլայնվում է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով շահառու ճանաչված անձանց շրջանակը:

Ապահովագրված անձանց փոխկապակցված անձանց մասով է հաջորդ փոփոխությունը: Առաջարկվում է, որ փոխկապակցված անձինք՝ ընտանիքի անդամները, որոնք ներգրավված չեն համակարգում, վճարեն եւ մասնակցեն ապահովագրության համակարգի շրջանակում տրամադրվող ծառայություններից:

Ապահովագրավճար վճարող անհատ ձեռնարկատերերի ապահովագրավճարների կատարման պատշաճ ապահովման նպատակով առաջարկվել է ապրիլի 20-ի փոխարեն կատարման վերջնաժամկետ սահմանել հուլիսի 20-ը:

Որոշակի խմբագրական փոփոխություններ են առաջարկվում «Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» օրենքի շրջանակում, նաեւ տարընկալումների պատճառ դարձած որոշ դրույթներ հստակեցվում են:

Վերոնշյալ կարգավորումներն ԱԺ արտահերթ նիստում քննարկման է ներկայացրել ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Լենա Նանուշյանը՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացնելով «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» եւ կից օրենքներում փոփոխություններ նախատեսող օրենսդրական փաթեթը:

Հարցն ընդունվել է առաջին ընթերցմամբ:

ՄԻՐԶՈՅԱՆՆ ՈՒ ԿԱԼԱՍԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ

Հայաստանի Հանրապետության ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, ԵՄ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալասի հետ:

Զրուցակիցները քննարկել են ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի հետեւողական կյանքի կոչմանն ուղղված աշխատանքները: Անդրադարձ է կատարվել առաջիկա բարձրաստիճան այցերի եւ միջոցառումների օրակարգային հարցերին եւ նախաձեռնություններին, որոնք միտված են շոշափելի արդյունքների շարունակական ապահովմանը:

Արարատ Միրզոյանը եւ Կայա Կալասը մտքեր են փոխանակել Մերձավոր Արեւելքում զարգացումների եւ իրավիճակի հանգուցալուծման հնարավորությունների շուրջ:

ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

Իրանի գերագույն առաջնորդ Մոջթաբա Խամենեին գտնվում է անգիտակից վիճակում եւ բուժում է ստանում: Այս մասին հայտնում է The Times-ը՝ հղում անելով աղբյուրներին: Հրապարակման համաձայն՝ տեղեկությունը հիմնված է դիվանագիտական գրության վրա, որը կազմվել է, ենթադրաբար, ամերիկյան եւ իսրայելական հետախուզական տվյալների հիման վրա եւ փոխանցվել Պարսից ծոցի դաշնակիցներին:

Ըստ նույն աղբյուրի՝ Խամենեին գտնվում է Քում քաղաքում՝ Թեհրանից մոտ 130 կմ հարավ, եւ ծանր վիճակի պատճառով չի կարող մասնակցել պետական որոշումների կայացման գործընթացին: Նշվում է, որ այս տեղեկատվությունը առաջին անգամ է բացահայտում նրա գտնվելու վայրը, ինչը լրացուցիչ լարվածություն է ստեղծում տարածաշրջանում:

Ավելի վաղ ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը հայտարարել էր, որ Խամենեին վիրավորվել է, իսկ CNN-ը հաղորդել էր, որ նա ստացել է ոտքի կոտրվածք, կապտուկ աչքի շրջանում եւ վնասվածքներ՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից իրականացված հարվածների առաջին օրերին: Սակայն պաշտոնական Թեհրանը այս տեղեկությունները չի հաստատել, ինչն ավելացնում է անորոշությունն ու շահարկումների ալիքը միջազգային քաղաքական դաշտում:

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է ՄԱՂԹԵԼ

ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը Միացյալ Նահանգների անունից հաջողություն է մաղթել Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանին այս շաբաթվա վերջին կայանալիք խորհրդարանական ընտրություններում:

«Ամեն ինչից առավել ես պարզապես գնահատում եմ Վիկտորի հետ իմ բարեկամությունը, քանի որ շատ հազվադեպ է հանդիպել մեկին, ով ունի դիվանագիտական տաղանդի եւ իմաստության նման համադրություն: Մեզ համար (ԱՄՆ-ի համար) շատ կարեւոր է, որ մենք շարունակենք պահպանել այս հարաբերությունները Հունգարիայի հետ: Եւ ես գիտեմ, որ հինգ կամ վեց օրից ընտրություններ ունեք, եւ մենք ցանկանում էինք ողջունել Ձեզ եւ մաղթել հաջողություն»,-ասել է Վենսը Օրբանին Բուդապեշտում բանակցություններից առաջ:

Փոխնախագահը շեշտել է Հունգարիայի հետ բարեկամական հարաբերությունների կարեւորությունը Միացյալ Նահանգների համար՝ հաշվի առնելով, որ հանրապետությունը «կարեւոր դեր է խաղում Եվրոպան ուժեղ եւ բարգավաճ դարձնելու գործում»:

«Դուք իսկական պետական գործիչներից մեկն եք, ես նույնիսկ կասեի՝ Եվրոպայի այն քիչ թվով իսկական պետական գործիչներից մեկը, այն քիչ մարդկանցից մեկը, ով կարող է կապ հաստատել աշխարհի տարբեր ծայրերից եկած մարդկանց հետ եւ խաղալ խաղաղարարի դեր, տնտեսական առաջնորդի դեր: Մենք ունենք գերազանց տնտեսական եւ առեւտրային հարաբերություններ, որոնց մասին այսօր կխոսենք»,-հավելել է Վենսը:

ՀՈՐՄՈՒԶԻ ՆԵՂՈՒՑ

ՍՊԱՌՆԱՑԵԼ Է ՄԵԿ ԳԻՇԵՐՈՒՄ ՈՉՆՉԱՑՆԵԼ ԻՐԱՆԸ

ԱՄՆ նախագահը սպառնացել է մեկ գիշերում ոչնչացնել Իրանը, եթե Թեհրանը չհամաձայնի մինչեւ երեքշաբթի երեկոյան ժամը 8-ը վերաբացել Հորմուզի նեղուցը, որտեղով անցնում է աշխարհում սպառվող նավթի մոտ 20 տոկոսը:

Դոնալդ Թրամփն ասել է, որ այդ մեկ գիշերը կարող է լինել այսօր (երեկ՝ խմբ.), երբ ամերիկյան զինուժը մի քանի ժամում կարող է ամբողջությամբ ոչնչացնել Իրանի քաղաքացիական ենթակառուցվածքները:

«Բայց մենք նրանց ժամանակ ենք տալիս մինչեւ վաղը, արեւելյան ժամանակով ժամը 20:00-ն: Եւ դրանից հետո նրանք չեն ունենա կամուրջներ, չեն ունենա էլեկտրակայաններ», - ասել է Թրամփը:

Թեեւ Թեհրանը երեկ մերժել էր ժամանակավոր հրադադարի մասին միջնորդների առաջարկը, Թրամփն ասել է, որ բանակցությունները շարունակվում են Իրանի «ողջամիտ» առաջնորդների հետ. թե ովքեր են նրանք, պարզ չէ: Ըստ ԱՄՆ նախագահի՝ մինչեւ այսօր (երեկ՝ խմբ.) երեկո իր համար «ընդունելի» գործարք պետք է կնքվի, որը կներառի «նավթի ազատ փոխադրում» Հորմուզի նեղուցով: Այլապես ԱՄՆ-ն ստիպված կլինի էլ ավելի ուժեղ հարվածել Իրանին:

Չնայած Թրամփի բազմաթիվ սպառնալիքներին՝ առայժմ ոչինչ չի վկայում, որ Թեհրանը մտադիր է զիջման գնալ: Իրանցի բարձրաստիճան պաշտոնյան, ում անունը չի նշվում, Reuters-ին ասել է, որ Թեհրանը մերժել է ժամանակավոր հրադադարի վերաբերյալ բոլոր առաջարկները եւ նախապայմաններ է ներկայացրել՝ ԱՄՆ-ի հետ «երկարատեւ խաղաղության» շուրջ բանակցությունների համար: Դրանք ներառում են հարվածների անհապաղ դադարեցում, երաշխիքներ, որ դրանք չեն կրկնվի ապագայում եւ վնասի փոխհատուցում:

Իրանի նախագահն էլ հայտարարել է, որ «ավելի քան 14 միլիոն «հպարտ իրանցիներ մինչ օրս գրանցվել են՝ հանուն Իրանի պաշտպանության իրենց կյանքը զոհաբերելու համար»: Մասուդ Փեզեշքիանը սոցցանցում գրել է, որ ինքը եւս հավատարիմ է այդ գաղափարին:

Իրանի խորհրդարանի փոխնախագահ Ալի Նիկզադն էլ հայտարարել է, որ խորհրդարանը նեղուցի նկատմամբ Իրանի «ինքնիշխանության եւ լեգիտիմության իրականացման» վերաբերյալ շուտով օրենք կընդունի. «Այս հարցը շուտով կբարձրացվի խորհրդարանի բաց նիստում... եւ այն կդառնա օրենք: Օրենքն անպայման կկիրառվի Հորմուզի նեղուցում Իրանի Իսլամական Հանրապետության կողմից»:

Հորմուզի հարցով նախատեսված է նաեւ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստ, որի ժամանակ քվեարկության կդրվի Բահրեյնի ներկայացրած բանաձեւը: Այն անդամ երկրներին «խրախուսում է համակարգել պաշտպանական բնույթի ջանքերը՝ նեղուցով նավարկության անվտանգությունն ապահովելու համար»:

Հորմուզի փակ լինելու պատճառով նավթի գինը դեռ բարձր է՝ 111 դոլարից ավելի մեկ բարելի դիմաց:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՍՊԱՍՎՈՒՄ Է ԲԱԽՈՒՄ

Հայիթիում գործող զինված խմբավորումների մոտ կեսը կազմված է երեխաներից, եւ նրանք կարող են շուտով հայտնվել միջազգային նոր ուժերի դեմ առ դեմ: Այս մասին հայտնում է CNN-ը՝ նշելով, որ ՄԱԿ-ի տվյալներով՝ միայն 2024 թվականին առնվազն 302 երեխա ներգրավվել է հանցավոր խմբերի կազմում՝ հիմնականում մասնակցելով մարտական գործողություններին:

Երկրում խորացող սոցիալ-տնտեսական ճգնաժամը, աղքատությունն ու անապահովությունը երեխաներին մղում են հանցավոր խմբերի շարքերը: UNICEF-ի տվյալներով՝ 2025 թվականին նման ներգրավվածությունը աճել է շուրջ 200%-ով: Խմբավորումները ակտիվորեն օգտագործում են սոցիալական ցանցերը՝ երիտասարդներին գրավելու համար՝ ցուցադրելով փող, զենք եւ «կյանքի լավ պայմաններ»: Շատ դեպքերում երեխաները միանում են գոյատեւելու համար՝ ստանալով սնունդ, կացարան եւ նույնիսկ գումար՝ տարբեր հանցավոր գործողությունների դիմաց:

Միեւնույն ժամանակ, միջազգային հանրությունը պատրաստվում է ուժեղացնել ներկայությունը երկրում. նախատեսվում է տեղակայել շուրջ 5500 հոգուց բաղկացած բազմազգ ուժ, որը պետք է աջակցի տեղական ոստիկանությանը: Սակայն փորձագետները զգուշացնում են, որ հնարավոր գործողությունների ընթացքում երեխաները կարող են հայտնվել առաջնագծում, իսկ նրանց հետ վարվելու հարցը շարունակում է մտահոգիչ մնալ: ՄԱԿ-ը կոչ է անում կիրառել հատուկ «հանձնման մեխանիզմներ», որպեսզի երեխաները չդառնան բռնության զոհ եւ հնարավորություն ստանան վերահնտեգրվելու հասարակություն:

ԵՐԱՇԽԻՔՆԵՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

ԱՄՆ-ի կողմից ռազմական գործողությունները դադարեցնելու առաջարկին ի պատասխան՝ Իրանը պահանջել է երաշխիքներ, որ իր վրա կրկին հարձակում չի լինի, հաղորդում է New York Times-ը՝ հղում անելով իրանցի պաշտոնյաներին:

Ավելի վաղ Իրանի պետական լրատվական գործակալությունը՝ IRNA-ն, հաղորդել էր, որ ԱՄՆ-ի առաջարկին ի պատասխան՝ Իրանը մերժել է հրադադարի հնարավորությունը՝ նշելով հակամարտության մշտական դադարեցման եւ պատժամիջոցների վերացման անհրաժեշտությունը: Ավելին, պատասխանում ներառված էին Հորմուզի նեղուցով նավերի անվտանգ անցման վերաբերյալ պահանջներ:

«Իրանական առաջարկը ներառում էր երաշխիք, որ Իրանը կրկին չի ենթարկվի հարձակման», - ասվում է հրատարակության մեջ՝ հղում անելով իրանցի երկու բարձրաստիճան պաշտոնյաների:

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ԿՔՆՆԱՐԿԵՆ

Երեքշաբթի օրը Միացյալ Թագավորությունը կանցկացնի վիրտուալ համաժողով, որին կմասնակցեն 41 երկրների ռազմական փորձագետներ՝ Մերձավոր Արեւելքի հակամարտության ավարտից հետո Հորմուզի նեղուցով անվտանգ անցման հարցը քննարկելու համար, հաղորդում է Financial Times-ը:

Նախկինում ավելի քան 30 երկիր, այդ թվում՝ Մեծ Բրիտանիան, պատրաստակամություն էին հայտնել նպաստել Մերձավոր Արեւելքում հակամարտության պայմաններում Հորմուզի նեղուցով նավերի անվտանգ անցման ապահովմանը:

«Երեքշաբթի օրը Մեծ Բրիտանիան կանցկացնի համաժողով, որին կմասնակցեն ավելի քան 40 երկրների ռազմական փորձագետներ՝ Մերձավոր Արեւելքում հակամարտության ավարտից հետո Հորմուզի նեղուցի անվտանգ օգտագործման հարցը քննարկելու համար», - հաղորդում է թերթը:

ՆՈՐ ՔՐԳՈՐԾ

Ո՞Ր ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ ԵՆ ԹԵՐԱՑԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն կոմիտեն Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի տարածքում տեղի ունեցած ողբերգական պայթյունի գործով նոր քրեական գործ է հարուցել:

Ի՞նչ պետք է անեին Քաղաքաշինության, տեխնիկական եւ հրդեհային անվտանգության տեսչական մարմնի պաշտոնատար անձինք, որպեսզի կանխվեր առեւտրի կենտրոնի պայթյունը, եւ 17 անձ չմահանար:

Մեր ձեռքում է հայտնվել Հակակոռուպցիոն կոմիտեի արձանագրությունը, որով նախաքննական մարմինը նախաձեռնել է քրեական վարույթ եւ քննում է, թե ինչու տեսչական մարմնի իրավասու պաշտոնատար անձինք աչք փակեցին առեւտրի կենտրոնի խախտումների վրա, որոնք ճակատագրական դարձան 17 քաղաքացու համար:

Հիշեցնենք, որ 2021թ. ապրիլի 6-ին «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած հրդեհի եւ 2022 թվականի օգոստոսի 14-ին նույն առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի եւ փլուզման դեպքի առթիվ նախաձեռնված եւ միացված քրեական վարույթի շրջանակում 2023թ. փետրվարի 22-ին «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրեն Ի. Մ.-ն հայտնվեց մեղադրյալի աթոռին: Նշված վարույթի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունի 5 անձ՝ «Երեւանի պահածոների գործարան» ՓԲԸ-ի տնօրենը, փոխտնօրենը եւ 3 տնտեսվարողները, որոնց պահեստային տարածքում առաջացել է պայթյունը: «Խոշոր ձկները» մինչ օրս պատասխանատվության չեն ենթարկվել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նախաքննական մարմինը հարցաքննել էր Երեւանի «Սուրմալու» առեւտրի կենտրոնի սեփականատեր Ռազմիկ Զախարյանին, սակայն նրա պատասխանատվության հարցը իրավապահներն այդպես էլ չկարողացան առաջ քաշել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Ի՞ՆՉ ԵՂԱՎ ՄԵՔԵՆԱՅԻ ՀԵՏ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ իրավապահները հայազգի գործարար, հեղինակություն համարվող Ռուբեն Թաթուլյանի, որն ավելի հայտնի է որպես Ռոբսոն, կնոջ մեքենան առգրավելուց հետո ակտ են գրել, ու ավելի ուշ մեքենան հատուկ պահպանվող տարածքից դուրս հանել եւ տրամադրել գործարարի կնոջը:

Հայտնել էինք, որ պարեկները հայտնաբերել ու հատուկ պահպանվող տարածք են տեղափոխել Ռուսաստանում եւ Հայաստանում հայտնի օլիգարխի ընտանիքին պատկանող կասկածելի «Mercedes»-ը: Տեղում պարզվել է, որ վարորդը հայկական վարորդական իրավունքի վկայական չունի, իսկ ավտոմեքենան գտնվել է հետախուզման մեջ, թեեւ վարորդը հայտնել է, որ այն այլեւս հետախուզման մեջ չէ: Վարորդը Ռուսաստանում եւ Հայաստանում հայտնի հայ օլիգարխներից մեկի ազգականն է, իսկ այդ օլիգարխի նկատմամբ ժամանակին հետախուզում էր հայտարարվել Ռուսաստանի կողմից, եւ ՌԴ-ն պահանջում էր, որ Հայաստանը նրան արտահանձնի Ռուսաստանին, ինչը հայկական կողմը մերժել էր:

Արդյունքում, ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ մեքենան, որը առգրավվել էր, հայազգի գործարար Ռոբսոնի կնոջ՝ Կարինե Թաթուլյանի մեքենան է եղել:

Ք. Մ.

ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում ավարտվել է դեռեւս 2018 թվականի հունիսի 8-ից քննվող քրեական վարույթի նախաքննությունը:

Նախաքննության ընթացքում իրականացված մեծածավալ ապացուցողական եւ վարութային այլ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ Ռ.Ս.-ն, Ա.Բ.-ն եւ Ա.Մ.-ն՝ Հ.Խ.-ի կողմից եղբայրներ՝ Ա.Ա.-ին եւ Մ.Կ.-ին պարտք եղած 10 մլն ՌԴ ռուբլի գումարը վերադարձնելու նպատակով այցելել են Հ.Խ.-ի եղբոր՝ Կ.Խ.-ի բնակարան, որտեղ 2018 թվականի մայիսի 19-21-ն ընկած ժամանակահատվածում, գործելով խմբի կազմում, նախնական հանցավոր համաձայնությամբ եւ միասնական դիտավորությամբ, մեկը մյուսի գործողությունները փոխլրացնելով, խոշտանգել՝ հոգեկան ուժեղ տառապանք են պատճառել Կ.Խ.-ին եւ նրա եղբորորդուն՝ անչափահաս Ա.Խ.-ին:

Ռ.Ս.-ի, Մ.Կ.-ի, Ա.Ա.-ի, Ա.Բ.-ի եւ Ա.Մ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 196-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 5-րդ կետերով (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը):

Ա.Բ.-ի եւ Ա.Մ.-ի նկատմամբ հայտարարվել է հետախուզում:

Ռ.Ս.-ի, Մ.Կ.-ի, Ա.Ա.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԱԿՈՑ Է ՀՆՉԵԼ

Ապրիլի 6-ին կրակոց է հնչել ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում: Ժամը 18:00-ի սահմաններում Երեւանի 103 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը նշված վայրից հերացու անվան թիվ 1 համալսարանական հիվանդանոց է տեղափոխել մի քաղաքացու:

Shamshyan-ի հաղորդմամբ՝ դեպքի վայր եւ հիվանդանոց են մեկնել ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Կենտրոնական բաժնի եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչության Երեւանի քրեական վարչության ծառայողները:

Տեղում պարզվել է, որ վիրավորը մոտ 21 տարեկան տղա է, որը ձախ սրունքի հատվածում ստացել է հրազենային վնասվածք՝ կրակոցի հետեւանքով:

Դեպքի փաստով ոստիկանության Կենտրոնական բաժնում փաստաթղթեր են կազմվել, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Երեւանի քաղաքի քննչական վարչության Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական 1-ին բաժին:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վիրավորը 21-ամյա Սուրեն Ռուսյանն է:

ՆԳՆ-ն հայտնում է, որ ժամը 16.56-ին շտապօգնության խումբը «ձախ սրունքի առաջային մակերեսի հրազենային վիրավորում» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխել մի անձի:

Նախնական տվյալներով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնավոր պահնորդական ընկերության աշխատակիցը հերթափոխի ընդունման-հանձնման ժամանակ իրեն ամրակցված զենքից պատահական կրակոց է արձակել: Տեղափոխվածի առողջական վիճակը գնահատվում է բավարար:

ԱԶԱՏՎԵՑ

Քննչական կոմիտեն հաստատում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ 18-ամյա Դավիթ Մինասյանի միջադեպի գործով պաշտոնից ազատվեց Երեւան քաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնի պետ արդարադատության երկրորդ դասի խորհրդական Դավիթ Կիրակոսյանը:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա Երեւանի նախկին ոստիկանապետ Ներսես Նազարյանի քրոջ որդին է: Աղմկահարույց միջադեպի գործով աշխատանքից ազատել են բռնցքամարտի աշխարհի չեմպիոն Իսրայել Հակոբկոխյանի քնիչ որդուն եւ նրա պետին: Վերջիններս քննում էին Փաշինյանի հետ 18-ամյա Դավիթի միջադեպի գործը: Հիշեցնենք, որ եկեղեցու տարածքում Նիկոլ Փաշինյանի հետ տեղի ունեցած միջադեպից հետո իրավապահ մարմինները ձերբակալել էին երկու երիտասարդ եղբայրների եւ ազատամարտիկի: Քննիչները այցելել էին երիտասարդների բնակարան՝ իրականացնելու քննչական գործողություններ եւ խուզարկություն: Իհարկե, նրանց տնից որեւէ արգելված կամ գործի համար նշանակալի առարկա չէին հայտնաբերել:

ԿԱՍԵՑՎԵԼ Է

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողական գործողությունների շրջանակում հեղուկացված ածխաջրածնային գազի, բենզինի եւ դիզելային վառելիքի վաճառքով զբաղվող «ԱՐՄԱՆ ԱԹՈՅԱՆ ԱՐՄԵՆԻ» ՍՊԸ-ին պատկանող լցակայանում (հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Կամոյի 23) հայտնաբերվել են խախտումներ:

Ստուգմամբ պարզվել է, որ ընկերությունը շահագործում է չստուգաչափված չափիչ միջոցներ, որի արդյունքում կասեցվել է հեղուկացված ածխաջրածնային գազի, բենզինի եւ դիզելային վառելիքի աշտարակների գործունեությունը՝ մինչեւ հայտնաբերված խախտումների վերացումը:

Արձանագրված իրավախախտումների համար տնտեսվարող սուբյեկտը կենթարկվի վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ԿԲՌՆԱԳԱՆՁՎԻ

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի հուլիսի 10-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի՝ 1368 քմ մակերեսով հողամասի՝ 2008 թվականի օգոստոսի 18-ին տեղի ունեցած աճուրդն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու պահանջով:

Դատարանը 2026 թվականի մարտի 31-ի վճռով բավարարել է Գլխավոր դատախազության հայցը:

Նկատի ունենալով, որ առկա է հողամասը վերադարձնելու անհնարինություն, որպես պայմանագրի անվավերության հետեւանք՝ վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, հողամասը ձեռք բերող ֆիզիկական անձից հօգուտ Դիլիջան համայնքի՝ կբռնագանձվի 2 միլիոն 970 հազար դրամ (հողամասի գնահատված շուկայական արժեքը՝ ձեռքբերման պահի դրությամբ):

● *Ապրիլի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է բնակարանային գողության 4 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԽԱՅՏԱՌԱԿ ՆՈՐՈԳՈՒՄ

Դիլիջանի բնակիչներին մտահոգում է, որ քաղաքի մշակույթի պալատի վերանորոգումը կիսատ է մնացել, ներկայումս այն չի շարունակվում: Քաղաքի կենտրոնում հառնող շենքում նորոգման աշխատանքները կատարել է «Արտդիանշին» ՍՊԸ-ն, որը Դիլիջանում բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացման աշխատանքները վատ որակով է կատարել:

Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը 2022թ. դեկտեմբերին է սկսվել: Այդ սուբվենցիոն ծրագրի արժեքն ավելի քան 283 միլիոն դրամ է, գումարի 60 տոկոսը Դիլիջան համայնքի ներդրումն է, մնացածը՝ պետական բյուջեի: Դիլիջանի մշակույթի պալատում տեղակայված է քաղաքային գրադարանը, որի հազարավոր գրքերը, պարկերի մեջ դարսված, գտնվում են մշակույթի պալատի առաջին հարկում:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին դեռեւս 2024թ.-ին հարցում եմ արել մարզում հետաձգված սուբվենցիոն ծրագրերի մասին: Մարզպետարանից հայտնել են. «ՀՀ Տավուշի մարզում իրականացվող սուբվենցիոն ծրագրերը մշտադիտարկվում են ինչպես մարզպետի որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի, այնպես էլ ՏԿԵՆ-ի համապատասխան մասնագետների կողմից: 2024 թվականին մշտադիտարկման են ենթարկվել ինչպես 2024 թվականի, այնպես էլ նախորդ տարիներին հաստատված եւ 2024 թվական տեղափոխված ծրագրերը: Մշտադիտարկման թիվը գերազանցում է 250, ծրագրերից մեկում առկա է ժամկետի ուշացում (Դիլիջանի մշակույթի տան հիմնանորոգում), որի համար ձեռնարկվել են միջոցներ 2025 թվականի առաջին եռամսյակում ավարտելու համար»):

2026 թվականի առաջին եռամսյակն է ավարտվել, սակայն Դիլիջանի մշակույթի պալատի նորոգումը կիսատ է, դադարեցված է: Մշակույթի պալատում տեղակայված քաղաքային գրադարանի չգործելը մտահոգում է դիլիջանցիներին: «Մասնակցային բյուջետավորում - 2026» գործընթացի շրջանակներում Դիլիջան համայնքում ներկայացվել է 9 նախաձեռնություն, որի մեջ էր Վիկտորիա Անդրիասյանի հեղինակած «Դիլիջան քաղաքի գրադարանի հիմնանորոգում եւ վերաբացում» նախագիծը: Այդ ծրագրով նախատեսվում էր իրականացնել Դիլիջանի գրադարանի շենքի ամբողջական վերանորոգում եւ անհրաժեշտ ենթակառուցվածքների բարելավում՝ նպատակ ունենալով վերականգնել գրադարանի լիարժեք գործունեությունը: Ծրագրի հեղինակը նշել է, որ ներկայումս գրադարանը չի գործում, ինչը խոչընդոտում է կրթական, մշակութային եւ տեղեկատվական ծառայությունների մատուցմանը քաղաքի բնակիչներին եւ այցելուներին: Դիլիջանի գրադարանի վերանորոգման նախագիծը չէր կարող իրականացվել «Մասնակցային բյուջետավորում - 2026» գործընթացի շրջանակում, քանի որ քաղաքային գրադարանը տեղակայված է Դիլիջանի մշակույթի պալատի շենքում, որի նորոգման սուբվենցիոն ծրագիրը կիսատ է մնացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է

ՊԵՏՔ Է ՄՏԱԾԻ ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԱԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իսպանիայի արտաքին գործերի նախարար Խոսե Մանուել Ալբարեսը հայտարարել է, որ ԱՄՆ-ի դժգոհություններն ու ՆԱՏՕ-ից դուրս գալու սպառնալիքները խթանում են եվրոպական երկրներին՝ փնտրելու անվտանգության այլ ձեւաչափեր: Դա տեղի է ունենում այն բանից հետո, երբ եվրոպական երկրները հրաժարվեցին իրենց նավատորմներն ուղարկել Հորմուզի նեղուց՝ գլոբալ առեւտրային նավարկությունը բացելու համար:

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ կարող է հեռանալ դաշինքից, ինչն իսկական ճգնաժամ կդառնա ՆԱՏՕ-ի համար:

Ալբարեսն ընդգծել է, որ որոշումն ամբողջությամբ Թրամփի ձեռքում է, բայց հիշեցրել է, որ ՆԱՏՕ-ի դաշնակիցները միասնաբար կանգնել են Վաշինգտոնի կողքին 2001 թվականի սեպտեմբերի 11-ի հարձակումների ժամանակ:

«ՆԱՏՕ-ն փոխշահավետ դաշինք է ինչպես եվրոպացիների, այնպես էլ ամերիկացիների համար: Բայց ԱՄՆ վարչակազմի հայտարարություններն ու եվրատլանտյան անվտանգության նոր դիրքորոշումները մեզ՝ եվրոպացիներիս, դրդում են մեր ինքնիշխանության ու պաշտպանական հարցերում ինքնուրույն քայլեր ձեռնարկել», - ասել է Ալբարեսը La Sexta հեռուստաալիքին՝ հավելելով ԵՄ-ն պետք է համաեվրոպական բանակ ստեղծելու եւ իր պաշտպանական արդյունաբերությունները ինտեգրելու մասին մտածի, ինչպես նաեւ ստեղծի թվային մի շուկա եւ կապիտալ շուկաների միություն:

Իսպանիայի ձախակողմյան կառավարությունը Իրանի դեմ պատերազմի ամենակատաղի քննադատներից մեկն է: Անվանելով այդ պատերազմն անօրինակ՝ Իսպանիան փակել է իր օդային տարածքը ԱՄՆ-ի ռմբակոծիչների համար եւ արգելել օգտագործել հարավային Իսպանիայում համատեղ գործող ռազմական բազաները:

Թրամփը հակադարձել է Իսպանիային՝ սպառնալով առեւտրային տուրքեր կիրառել:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՍԿՍՎԵԼ Է

Սամվել Կարապետյանը այլ քաղաքացիությունից հրաժարվելու գործընթացը սկսել է: Այս մասին ԱԺ-ի դիմաց «Ուժեղ Հայաստան» կուսակցության բողոքի ակցիայի ժամանակ ասել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Ալիկ Ալեքսանյանը:

«Սամվել Կարապետյանը 2 ամսից, երբ ընտրվի վարչապետ՝ կունենա միայն ՀՀ քաղաքացիություն»,- նշել է նա:

Պատասխանելով լրագրողի այն հարցին, թե արդյոք «Ուժեղ Հայաստան»-ը պատասխանատվություն է ստանձնում Վլադիմիր Պուտինի՝ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ արած հայտարարության մասով, Ալեքսանյանը նշել է, որ իրենք հայամետ ուժ են, իսկ ինչ վերաբերում է ռուսական անձնագիր ունենալուն՝ Սամվել Կարապետյանը նաեւ Եվրամիության անձնագիր ունի:

«Մեզ ոչինչ չի խանգարի ուժեղ Հայաստան ունենալու համար, մեր ժողովուրդը որոշել է, որ իրեն պետք է փոփոխություններ»:

Անդրադառնալով Սամվել Կարապետյանի՝ հանրության հետ չհաղորդակցվելուն ու իշխանության մատնանշած՝ խոսելու, հանրությանը դիմելու ու ճեպազրույցներ տալու ունեցած հնարավորությանը՝ Ալեքսանյանը շեշտել է, որ տեւական ժամանակ այն չի եղել, ու երբ հայտարարել են, որ նման հնարավորություն կա, իրականում չի եղել: *(Գ)*

ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԸՆՏԱՆԻՔ

Աշխատողների աշխատանքի եւ ընտանեկան պարտականությունների արդյունավետ համատեղման, աշխատանքի կազմակերպման ժամանակակից գործիքների ներդնման նպատակով Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից «e-draft.am» իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծով նախատեսվում է՝

Սահմանել, որ խնամքին մինչեւ տասներկու տարեկան երեխա ունեցող ծնողը (խնամատար ծնողը կամ որդեգրողը կամ խնամակալը) իրավունք ունի օգտվելու ծնողական ժամից՝ երեխային նախադպրոցական կամ հանրակրթական հաստատություն ուղեկցելու կամ հաստատությունից վերցնելու նպատակով:

ա) մինչեւ երկու երեխա ունեցող ծնողին՝ օրական առավելագույնը 30 րոպե,

բ) երեք եւ ավելի երեխա ունեցող ծնողին՝ օրական առավելագույնը 1 ժամ,

օրենսդրորեն ամրագրել ճկուն աշխատանքային գրաֆիկի կիրառման հնարավորությունը՝ աշխատողի եւ գործատուի փոխադարձ համաձայնությամբ:

Նախատեսված փոփոխությունները միտված են բարձրացնելու աշխատողների սոցիալական պաշտպանությունը եւ աշխատանքի արդյունավետությունը:

ԿՈՉ Է ԱՐԵԼ

Իրանի երիտասարդության եւ սպորտի փոխնախարար Ալի Ռեզա Ռահիմին կոչ է արել Իսլամական Հանրապետության բնակչությանը մասնակցել ապրիլի 7-ին երկրի ողջ տարածքում էլեկտրակայանների մոտ կայանալիք զանգվածային բողոքի ցույցերին, որոնց հարված հասցնելու սպառնալիք է ներկայացրել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը:

Ռահիմին կարծում է, որ «երիտասարդները, մարզիկները, արվեստագետները, ուսանողները եւ համալսարանական դասախոսները» կարող են միանալ բողոքի ցույցերին: Իրանի պետական հեռուստատեսությամբ հեռարձակված տեսաուղերձում նա բացատրել է, որ «բողոքի ցույցերի նպատակն է միջազգային հանրությանը հասցնել քաղաքացիական ենթակառուցվածքների վրա հարձակումների անընդունելիությունը, ինչը ռազմական հանցագործություն է»:

Նախարարի տեղակալը նաեւ ընդգծել է «այս պահին իրանցիների միջեւ հանրային համերաշխության կարեւորությունը՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից»:

● *Անցած 1 օրում գրանցվել է 21 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 28-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՈՒՂԵՐՁ

ԱՅՍՕՐՎԱ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՉԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒՄ

«Ուժեղ Հայաստան» կուսակցության առաջնորդ Սամվել Կարապետյանը ուղերձ է հղել, որը ներկայացնում ենք ստորեւ.

«Հիմա պարզ է՝ Փաշինյանի պատճառով Ռուսաստանի հետ սանձազերծված տնտեսական պատերազմ հուլիսին, թե փոփոխություններ, որոնք մենք կբերենք Հայաստանին հուսիսին:

Անկեղծ, բարկացած եմ փոքրիկ խմբակի ղեկավարի պահվածքից: Խայտառակ եղավ Մոսկվայում: Բայց ինչն ավելի վատ է՝ հետեւողական քայլերով դարձրեց մեր երկիրը աշխարհաքաղաքական բախման հրապարակ:

Ինչու էր պետք փորձեր անել հեռացնել բարեկամ Ռուսաստանին մեր տարածաշրջանից: Նրա ներկայությունը որեւիցե կերպ երբեք չի խանգարել այլ ուժային կենտրոնների հետ Հայաստանի համագործակցությանը, առեւտրին: Ու ապագայում էլ վստահ եմ՝ չի խանգարելու: Ուղղակի, խելք ու ժողովրդական լեզվով ասած՝ շնորհք է պետք ունենալ: Եվ հետո՝ պետք է պարզապես ողջամիտ լինել: Ռուսաստանի հետ են մեր տնտեսական ամենախորը կապերը: Ռուսաստանն է մեզ էժան գազ մատակարարում, սիրով ընդունում մեր սեզոնային աշխատողներին, գնում մեր գյուղատնտեսական ապրանքների զգալի մասը: Իսկ եթե դադարեցնի այդ ամենը, ի՞նչ պատասխան եք տալու մեր ժողովրդին, որն ավելի կաղքատանա:

Բայց, այսօրվա վարչապետին մեր հայրենակիցների ճակատագիրը, գրպանի ու սառնարանի պարունակությունը չի հետաքրքրում: Կարեւորը ինքը սուտ պատերազմներով վախեցնելով կարողանա մնալ իշխանության՝ հանուն սեփական բարեկեցության: Իհարկե՝ չի մնալու: Հեռացնելու ենք փոքրիկ խմբակին ու բարեկամություն անենք տարածաշրջանի բոլոր երկրների հետ, ուժային բոլոր կենտրոնների հետ:

Մենք տեսանք, թե ինչ պատահեց Վրաստանի եւ Ուկրաինայի հետ:

Մեզ նոր պատերազմներ պետք չեն:

Քվեարկելով Նիկոլի օգտին՝ դուք կստանաք աղքատություն եւ թշնամանք ռուսների հետ, բեւեռացում եւ տնտեսության փլուզում: Վստահե՛ք մեզ եւ կունենանք իրական փոփոխություն՝ ուժեղ տնտեսություն, միասնություն եւ երկարատեւ խաղաղություն:

Ժամանակն է ուժեղ Հայաստանի»,- գրել է նա: *(Գ)*

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

ՆԵՐԿԱՅԱՑԵԼ Է ՆՈՐ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՎ

Մարտի 27-29-ը Երեւանի «Մերիդիան» էքսպո կենտրոնում կայացած TOON EXPO 2026 ցուցահանդեսի ընթացքում Արդշինբանկի տաղավարում մասնագիտական խորհրդատվություն է ստացել շուրջ 500 այցելու, որոնց մի մասին տեղում տրամադրվել են հիփոթեքային ֆինանսավորման նախնական հաստատումներ, ընդունվել են հայտեր:

Արդշինբանկը ցուցահանդեսին մասնակցում էր չորրորդ անգամ՝ այս տարի ներկայանալով հատուկ հիփոթեքային առաջարկով, որն առանձնանում է մրցունակ պայմաններով եւ վարկի տրամադրման ամբողջականացված մոտեցմամբ:

Բանկը հիփոթեքային շուկայում շարունակում է պահպանել առաջատարի դիրքը՝ համագործակցելով մեծ թվով կառուցապատողների հետ:

Համագործակցությունների լայն շրջանակը հնարավորություն է ընձեռել ապագա վարկառուներին անմիջապես ցուցահանդեսի շրջանակներում իրականացնել բնակարանի ընտրությունն ու սկսել ֆինանսավորման գործընթացը՝ խնայելով ժամանակ եւ էապես արագացնելով ընթացակարգը:

«Այսօր տուն գնելը միայն վարկ վերցնելու մասին չէ. դա երկարաժամկետ ֆինանսական որոշում է, որտեղ կարեւոր է

յուրաքանչյուր մանրուք: Մենք ձգտում ենք մեր հաճախորդներին առաջարկել ոչ միայն մրցունակ պայմաններ, այլեւ վստահելի եւ հարմարավետ ճանապարհ՝ ընտրությունից մինչեւ գործարքի ավարտ»,- նշեց Արդշինբանկի մանրածախ բիզնեսի տնօրեն Միհրան Մուրադյանը:

TOON EXPO 2026-ի շրջանակում ներկայացված հատուկ առաջարկը կգործի մինչեւ ապրիլի 27-ը: Համաձայն առաջարկի՝ հիփոթեքային վարկ ձեւակերպելու դեպքում հաճախորդները կստանան պրեմիում դասի վարկային քարտ՝ մինչեւ 2 մլն ՀՀ դրամ նախահաստատված վարկային գծով եւ անկանխիկ գործարքների դիմաց 2% cashback-ով: Քարտի սպասարկումը առաջին 12 ամիսների ընթացքում լինելու է անվճար:

Առաջարկը հասանելի է այն հաճախորդների համար, ում անգրավ վարկերի բեռը բանկում չի գերազանցում 5 մլն ՀՀ դրամը: Առաջարկի այլ մանրամասների կարող եք ծանոթանալ

«Մեր նպատակն է հաճախորդի՝ բնակարան կամ բնակելի տուն գնելու հույսերը եւ նպատակները իրականություն դարձնել նրանց համար ավելի հարմար եւ կանխատեսելի գործընթացով՝ առաջարկելով շուկայում առկա լավագույն պայմանները»,- ասաց Միհրան Մուրադյանը:

Հիփոթեքային վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը Արդշինբանկում ամենամրցունակներից է շուկայում՝ սկսած 11,7%-ից, փաստացին՝ սկսած 12,3%-ից:

Ցուցահանդեսի ընթացքում բանկի տաղավար այցելած հաճախորդները հնարավորություն են ունեցել նաեւ տեղում ստանալու օնլայն վարկավորման սահմանաչափի նախնական հաստատում:

Մասնակցելով TOON EXPO-ին՝ Արդշինբանկը վերահաստատեց իր դիրքը որպես վստահելի եւ առաջատար ֆինանսական գործընկեր՝ առաջարկելով շուկայում մրցունակ եւ հաճախորդակենտրոն լուծումներ բնակարան ձեռք բերելու համար:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԿՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՏՈՒԿ ԱՌԱՋԱՐԿՈՎ



2026թ.-ի ապրիլի 10-12-ը Յունիբանկը կմասնակցի Հայաստանի լիզինգային եւ ֆինանսական լուծումների ոլորտի միջազգային ամենամեծ ցուցահանդես-վաճառքին՝ այցելուներին առաջարկելով շահավետ պայմաններ: Բիզնեսի ընդլայնման եւ արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ նորագույն տեխնիկան եւ սարքավորումները Յունիբանկի լիզինգի միջոցով կարելի է ձեռք բերել սկսած 0% կանխավճարով եւ մինչեւ 84 ամիս մարման ժամկետով: Լիզինգի նախահաստատումն իրականացվելու է անմիջապես բանկի տաղավարում՝ ընդամենը 5 րոպեում:

Լիզինգը վերջին տարիներին լայն կիրառություն է ստացել Հայաստանում՝ բիզնեսի համար դառնալով զարգացման հաջորդ փուլն ապահովող ճկուն եւ ժամանակակից գործիք: Յունիբանկի լիզինգային պորտֆելը 2025 թվականին նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնապատկվել է:

Լիզինգի միջոցով ընկերությունները եւ անհատ ձեռնարկատերերը կարող են առանց մեծ ներդրումների ձեռք բերել բժշկական սարքավորումներ, արտադրական եւ շինարարական տեխնիկա, տրանսպորտային միջոցներ, արեւային վահանակներ եւ այլն:

Leasing Expo 2026 ցուցահանդեսը կկայանա «Մերիդիան» կենտրոնում՝ համախմբելով ոլորտի առաջատար կազմակերպություններին:

ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿԸ ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

Կոնվերս Բանկին հերթական անգամ շնորհվել է SWIFT փոխանցումների որակի գերազանցության STP Excellence Award մրցանակը Commerzbank-ի կողմից: Մրցանակը վկայում է 2025 թվականի ընթացքում միջազգային փոխանցումների քանակական եւ որակական համապատասխանության, ինչպես նաեւ բարձր կատարողականի ապահովման մասին:

Այս ձեռքբերումը կարեւոր նշանակություն ունի ներկայիս աշխարհաքաղաքական պայմաններում, երբ միջազգային փոխանցումների որակը պահանջում է ոչ միայն տեխնոլոգիական զարգացում, այլեւ գործընթացների հստակ կազմակերպում եւ թիմի բարձր մասնագիտական պատրաստվածություն:

«Այս մրցանակը կարեւոր գնահատական է մեր թիմի հետեւողական աշխատանքի եւ միջազգային փոխանցումների ոլորտում մեր կայուն արդյունքների համար: Շարունակելու ենք պահպանել եւ զարգացնել մեր գործընթացներն ու կարողությունները՝ մեր հաճախորդներին տրամադրելով միջազգային չափանիշներին համապատասխան ծառայություններ եւ ամրապնդելով ոլորտում առաջատար դիրքերը»,- նշել է Բանկի ֆինանսական հաստատությունների եւ միջազգային բանկային հարաբերությունների վարչության ղեկավար Նելլի Քոչարյանը:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից



●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԱՆԱՀԻՏ»

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայկական ազգային կինոակադեմիան ամփոփել է «Անահիտ» ազգային կինոմրցանակաբաշխության քվեարկության արդյունքները ըստ անվանակարգերի:

Աշխատանքները դասավորված են այբբենական կարգով՝

«Լավագույն կարճամետրաժ ֆիլմ»

«Մատանի» - ռեժիսոր՝ Ալեքսանդր Աթանեսյան, պրոդյուսեր՝ Մանվել Սարիբեկյան,

«Մենակ երկուսով» - ռեժիսոր՝ Արթուր Սահակյան, պրոդյուսեր՝ Արամայիս Հայրապետյան,

«Յանա» - ռեժիսոր՝ Մարտին Մաթեւոսյան, պրոդյուսերներ՝ Անի Որսկանյան, Մարտին Մաթեւոսյան:

«Լավագույն վավերագրական ֆիլմ»

«Բնակիչները» - ռեժիսոր՝ Մերի Աղախանյան, պրոդյուսերներ՝ Մերի Աղախանյան, Ան-Կատրին Վիթ, Լինդա Մաթերն, Սերջիո Ջիզզարդի,

«Իմ հայկական ուրվականները» - ռեժիսոր՝ Թամարա Ստեփանյան, պրոդյուսերներ՝ Թամարա Ստեփանյան, Սելին Լուազո, Ալիս Բալդո,

«Վերապրել Շեքսպիրին» - ռեժիսորներ՝ Իննա Սահակյան, Ռուբեն Ղազարյան, պրոդյուսերներ՝ Վարդան Հովհաննիսյան, Մարիամ Դավթյան, Իննա Սահակյան:

«Լավագույն մոնտաժ»

Օլիվյե Ֆերարի - «Արտոյի երկիրը»,

Յաննիկ Լերոյ, Մերի Աղախանյան - «Բնակիչները»,

Արթուր Սահակյան - «Վերապրել Շեքսպիրին»:

«Լավագույն հնչյունային ձեւավորում»

Ժան Մարկ Շիկ - «Արտոյի երկիրը»,

Արման Ավետիսյան, Տիգրան Կուզիկյան, Հարութ Քոթանջյան - «Բախտի տերը»,

Տիգրան Կուզիկյան - «Մեդալի հակառակ կողմը»:

«Լավագույն նկարչական ձեւավորում»

Արթուր Սարյան - «Արտոյի երկիրը»,

Արմեն Ղազարյան - «Մեդալի հակառակ կողմը»,

Արմեն Ղազարյան - «Վազգեն. վերջին սպարապետը»:

«Լավագույն երաժշտություն»

Մարկ Ռիբո - «Արտոյի երկիրը»,

Անդրանիկ Բերբերյան - «Մեդալի հակառակ կողմը»,

Արմեն Մարտիրոսյան - «Վազգեն. վերջին սպարապետը»:

«Լավագույն օպերատորական աշխատանք»

Կլեր Մաթոն - «Արտոյի երկիրը»,

Ալբերտ Սարգսյան, Մերի Աղախանյան - «Բնակիչները»,

Սուրեն Թադեւոսյան - «Մեդալի հակառակ կողմը»:

«Լավագույն սցենար»

Թամարա Ստեփանյան, Ժան-Կրիստոֆ Ֆերարի, Ժան Բրեշան, Ռոմի Կոկիա դի Ֆերո, Ջիհանե Չուաիբ - «Արտոյի երկիրը»,

Աննա Մաքսիմ - «Մեդալի հակառակ կողմը»:

«Կնոջ լավագույն դերակատարում»

Կամիլ Կոտեն - «Արտոյի երկիրը»,

Աննա Մաքսիմ - «Մեդալի հակառակ կողմը»,

Մարջան Ավետիսյան - «Վազգեն. վերջին սպարապետը»:

«Տղամարդու լավագույն դերակատարում»

Շանթ Հովհաննիսյան - «Արտոյի երկիրը»,

Արտաշես Ալեքսանյան - «Մեդալի հակառակ կողմը»,

Խորեն Լեւոնյան - «Վազգեն. վերջին սպարապետը»:

«Լավագույն ռեժիսորական աշխատանք»

Թամարա Ստեփանյան - «Արտոյի երկիրը»,

Արշո Հարությունյան - «Թանկարժեք տղաները»,

Աննա Մաքսիմ - «Մեդալի հակառակ կողմը»:

«Լավագույն խաղարկային ֆիլմ»

«Արտոյի երկիրը» - պրոդյուսերներ՝ Թամարա Ստեփանյան, Ստեֆան Ժուրդեն, Կամիլ Ժենտե,

«Մեդալի հակառակ կողմը» - պրոդյուսեր՝ Աննա Մաքսիմ,

«Վազգեն. վերջին սպարապետը» - պրոդյուսեր՝ Նոնո Սարգսյան:

«Անահիտ» մրցանակաբաշխությունը տեղի կունենա Հայ կինոյի օրը՝ ապրիլի 16-ին:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԳՈՎԵԼ Է

«Սանդերլենդ»-ի գլխավոր մարզիչ Ռեժիս Լե Բրին անդրադարձել է Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի նորեկ Ֆին Գերագուսյանին: Նա ընդգծել է ակումբի ակադեմիայի 18-ամյա հարձակվողի առաջընթացը: Թեեւ Գերագուսյանը դեռ գլխավոր ակումբում նորամուտը չի նշել, բայց իր վրա մեծ ուշադրություն է գրավել: Նա «Սանդերլենդ»-ի երիտասարդական թիմում 13 գոլ է խփել ու նույնքան գոլային փոխանցում կատարել: Գերագուսյանը պարբերաբար մասնակցում է «Սանդերլենդ»-ի մարզումներին ու տպավորել է Ռեժիս Լե Բրիին: «Ֆինը մի քանի անգամ մարզվել է մեզ հետ, հավանում եմ նրա բնավորությունը: Լավ ֆուտբոլիստ է, ֆիզիկապես ուժեղ: Գիտեմ, որ այս լիգայում 2 ուժեղ կենտրոնական պաշտպանի եւ մեկ ուժեղ հարձակվողի կարիք կա: Ֆինը բազմակողմանի խաղացող է, դեռ երիտասարդ է եւ շատ կողմերով պետք է կատարելագործվի, բայց այս ցուցանիշներից եւս գոհ ենք»,- ասել է մարզիչը: Մարտի 29-ին Գերագուսյանը Հայաստանի հավաքականի կազմում Բելառուսի դեմ ընկերական խաղում նշել է նորամուտը՝ փոխարինման մտնելով երկրորդ խաղակեսում:

«ՓՅՈՒՆԻԿ»–Ը ԳԼԽԱՎՈՐՈՒՄ Է

Ավարտվել է Հայաստանի ֆուտբոլի առաջնության 20-րդ տուրը: «Փյունիկ»-ը հյուրընկալվելիս Լուկաս Ռեսենդեի գոլի շնորհիվ առավելության է հասել «-Շիրակ»-ի նկատմամբ: Արտակ Օսեյանի թիմը վաստակել է 41 միավոր ու գլխավորում է մրցաշարային աղյուսակը: «Արարատ-Արմենիա»-ն 1:1 է ավարտել «Ալաշկերտ»-ի դեմ դիմակայությունը: Գոլերը հեղինակել են Պաուլ Այոնգոն ու Դավիթ Տերտերյանը: «Արարատ-Արմենիա»-ն եւ «Ուրարտու»-ն վաստակել են 39-ական միավոր եւ ընթանում են 2-3-րդ տեղերում:

ԴԱԴԱՐԻ՛Ր ԽՈՍԵԼ

Խառը մենամարտերի կիսամիջին քաշային կարգում UFC գործող չեմպիոն, ռուսաստանցի Իսլամ Մախաչեւը հայտարարել է, որ թեթեւ քաշային կարգում UFC չեմպիոն Իլիյա Տոպուրիան (Իսպանիա) հրաժարվել է իր հետ մենամարտից, որը պետք է տեղի ունենար Սպիտակ տանն անցկացվելիք մրցաշարում:

«Ես արդեն հոգնել եմ Տոպուրիայի եւ նրա թիմի հորինած պատմություններից: Ինձ զանգեցին, ես համաձայնեցի Սպիտակ տանը մենամարտել նրա հետ: Հաջորդ օրն ինձ ասացին, որ Տոպուրիան պահանջել է անսահման բարձր հոնորար: UFC-ն մերժել է եւ նա հրաժարվել է մենամարտից:

Ահա եւ վերջ, ուրիշ ոչինչ: Նրա մենեջերն էլ է դա հաստատել: Իլիյա, դադարի՛ր խոսել: Ամեն հարցազրույցում տարբեր պատմություններ ես հորինում: Դու հրաժարվեցիր մենամարտից, եւ դու դա գիտես»,- սոցիալական ցանցերում գրել է Իսլամ Մախաչեւը:

Ավելի վաղ Տոպուրիան հայտարարել էր, որ Մախաչեւը վնասվածքի պատճառով հրաժարվել է մենամարտից:

ԱՍՏՎԱԾ ՆԵՐԽՈՒԺՈՒՄ Է ՈՉ ԹԵ ԱՂՄՈՒԿՈՎ, ԱՅԼ ԼՌՈՒԹՅԱՄԲ

Ախթալայի եւ հարակից գյուղերի հոգեւոր հովիվ Տեր Հեթում քահանա Թարվերդյանը գրում է. «Այսօր՝ Երեքշաբթի, մենք կանգնած ենք մի խորհրդավոր եւ անսահման խորության առաջ՝ Սուրբ Ավետման տոնի: Մեր խորհրդածության առանցքում է Ղուկասի Ավետարանի 1.26-38 հատվածը, որտեղ երկնայինն ու երկրայինը հանդիպում են, եւ մարդկային ազատությունը՝ աստվածային կամքի հետ միահյուսվում:

Ավետումը միայն մի պատմություն չէ Մարիամի մասին. այն մարդու եւ Աստծո հարաբերության բարձրագույն դրվագներից մեկն է: Երբ Գաբրիել հրեշտակը ողջունում է Կույս Մարիամին՝ «Ուրախացի՛ր, շնորհալեցուն», այդ խոսքերը բացահայտում են մի նոր իրականություն. Աստված այլեւս հեռու չէ, այլ մոտ է, ներթափանցում է մարդկային գոյության խորքերը:

Սակայն այս պատմության առանցքային պահը ոչ թե հրեշտակի խոսքն է, այլ Մարիամի պատասխանը.

«Ահա՛ ես Տիրոջ աղախինն եմ, թող ինձ լինի քո խոսքի համաձայն»:

Այս խոսքը մարդկային ազատության բարձրագույն դրսեւորումն է: Մարիամը չի ստիպվում, չի պարտադրվում, այլ ազատորեն է ընդունում աստվածային ծրագիրը: Եվ հենց այստեղ է Ավետման փիլիսոփայական խորությունը.

Աստված չի խախտում մարդու ազատությունը, այլ սպասում է նրա «այո»-ին:

Մարդկային կյանքում ամենամեծ փոփոխությունները սկսվում են հենց այդ փոքրիկ, բայց ճակատագրական «այո»-ից: Երբ մարդը համարձակվում է վստահել, բացվել եւ ընդունել այն, ինչ դեռ ամբողջովին չի հասկանում:

Մարիամի «այո»-ն նաեւ հավատքի սահմանումն է. հավատքը ոչ թե միայն գիտելիք է, այլ վստահություն անտեսանելիի հանդեպ: Նա չգիտեր ապագայի բոլոր մանրամասները, բայց վստահեց Աստծուն: Եվ այդ վստահությունը դարձավ փրկության պատմության սկիզբ:

Այսօր մեզանից յուրաքանչյուրն էլ իր ներսում լսում է այդ նույն կանչը: Գուցե ոչ հրեշտակի ձայնով, բայց կյանքի հանգամանքների, ներքին ձայների, խղճի միջոցով: Հարցն այն է՝ ունե՞նք արդյոք Մարիամի համարձակությունը՝ ասելու.

«Թող լինի»:

Ավետումը մեզ սովորեցնում է, որ Աստված ներխուժում է ոչ թե աղմուկով, այլ լռությամբ: Եվ միայն նա, ով ունի ներքին լռություն, կարող է լսել այդ կանչը:

Թող այս տոնը մեզ համար դառնա ոչ միայն հիշատակ, այլ ներքին վերափոխման սկիզբ. որ մենք էլ կարողանանք մեր կյանքի ամենատարբեր իրավիճակներում ասել մեր «այո»-ն Աստծուն, եւ այդ «այո»-ի մեջ գտնել մեր իսկական ազատությունն ու փրկությունը»:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում ապրիլի 9-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա Ջ.Վերդիի «Տրավիատա» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ սկսել բիզնես, բայց չեմ ուզում խնդիրներ ունենալ հարկայինի հետ: Ինչի՞ց սկսեմ:
Աշոտ Բարսեղյան, 36 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով, նախ, անհրաժեշտ է որոշել՝ գրանցվել որպես անհատ ձեռնարկատե՞ր, թե՞ հիմնադրել նոր ընկերություն: Այս երկուսի հիմնական տարբերությունները կայանում են նրանում, որ Ա/Ձ-ի դեպքում Դուք Ձեր պարտավորությունների համար պատասխանատվություն եք կրում Ձեզ պատկանող ամբողջ գույքով, իսկ ՍՊԸ-ի դեպքում՝ պատասխանատվություն է կրում ՍՊԸ-ն այն գույքով, որը պատկանում է ընկերությանը: Իսկ ընկերությունն էլ, իր հերթին, պատասխանատվություն չի կրում իր մասնակիցների պարտավորությունների համար: Եթե նախատեսում եք ձեռնարկել փոքրածավալ բիզնես, ապա ավելի նպատակահարմար կլինի ծավալել այն Ա/Ձ հաշվառվելով, որի համար Ձեզ անհրաժեշտ է միայն անձնագրով եւ սոցիալական քարտով, իսկ նույնականացման քարտ ունենալու դեպքում՝ միայն նույնականացման քարտով ներկայանալ Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի գործակալություն՝ ք. Երեւան, Կոմիտասի պողոտա, 49/3 հասցեով (մարզերի դեպքում՝ հասցեները կարող եք գտնել հետեւյալ հղումով): Ներկայանալով գործակալություն՝ անհրաժեշտ է տեղում վճարել 3300 ՀՀ դրամ գումար, որից 3000 ՀՀ դրամը՝ որպես պետական տուրք, իսկ 300 ՀՀ դրամը՝ միջնորդավճար: Որպես անհատ ձեռնարկատեր հաշվառումը կատարվում է տեղում, եւ տեղում Ձեզ կտրամադրեն համապատասխան քաղվածք, որում նշված կլինեն Ձեր Ա/Ձ-ի վերաբերյալ բոլոր մանրամասները, այդ թվում՝ հարկային կոդը՝ ՀՎՀՀ-ն: Իսկ ՍՊԸ գրանցելու նպատակով անհրաժեշտ է կազմել մի շարք փաստաթղթեր՝ հիմնադիր ժողովի որոշում, կանոնադրություն, ներկայացնել շահառուի հայտարարություն, որոնց օրինակները կարող եք ներբեռնել հետեւյալ հղումով: Որպես Ա/Ձ հաշվառվելուց եւ ՍՊԸ գրանցելուց հետո անհրաժեշտ է որոշել, թե կոնկրետ ինչ գործունեությամբ պետք է զբաղվեք, եւ կախված դրանից՝ որոշվելու է այն հարկատեսակը, որով պետք է գործեք եւ կատարեք վճարումներ: Եթե, օրինակ, ցանկանում եք մատուցել ծառայություններ, ապա կարող եք աշխատել շրջանառության հարկով, որի համար էլ Ա/Ձ հաշվառվելու կամ ՍՊԸ գրանցելու պահից 20-օրյա ժամկետում պետք է համապատասխան հայտ ներկայացնեք հայկային ծառայություն՝ շրջանառության հարկով աշխատելու համար: Իսկ հարկային հաշվետվություններ ուղարկելու համար պետք է պարտադիր ունենաք նույնականացման քարտ, քանի որ առանց դրա չեք կարողանա էլեկտրոնային կարգով ներկայացնել հաշվետվություն:
Հարկային եւ մաքսային ծառայություններ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նույնականացման քարտը հարկային հաշվետվությունների նպատակով օգտագործելու համար անհրաժեշտ է մոտենալ ցանկացած վճարային տերմինալի, սեղմել e-keng պատուհանի վրա, լրացնել անհրաժեշտ դաշտերը, կատարել վճարումը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Էլիտար շենքի բնակիչները կայանատեղիի արգելափակոցը բացելու համար ազդանշաններ են տալիս ու խանգարում անդորրս: Ո՞ւմ դիմեմ հարցը կարգավորելու համար:
Հեղինե Սիմոնյան, 57 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝ նախորդ համարում)* Վարորդների կողմից Ձեր գիշերային անդորրը խանգարելու դեպքերի մասին պետք է ահազանգեք 1-02 հեռախոսահամարով՝ հայտնելով կատարվածը, հասցեն ու հնարավորության դեպքում՝ մեքենայի պետհամարանիշները: Ահազանգից հետո ոստիկանության համայնքային տեսուչները կգան հասցե եւ Ձեր գիշերային անդորրը խանգարողներին առաջին անգամ կնախազգուշացնեն, որ այլեւ նման գործողություններ չկատարեն՝ կազմելով արձանագրություն նախազգուշացման մասին, իսկ երկրորդ անգամ կրկնվելու դեպքում՝ ոստիկանության աշխատակիցները կտուգանեն 40,000 դրամով: Որպեսզի ոստիկանության աշխատակիցները կարողանան իրավախախտին բացահայտել ու նրան վարչական պատասխանատվության ենթարկել, ապահովության համար անհրաժեշտ կլինի, որ Դուք տեսաձայնագրեք այն տրանսպորտային միջոցները, որոնք խանգարում են Ձեր գիշերային անդորրը, որից հետո այդ տեսանյութերը պետք է ներկայացնել վերոնշյալ իրավասու անձանց՝ ՃՈ կամ ոստիկանություն:
ՀՀ ոստիկանություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Իսկ եթե ՃՈ եւ ոստիկանության աշխատակիցները ժամանակին չարձագանքեն կամ որեւէ միջամտություն չկատարեն, ապա կարող եք ոստիկանության աշխատակիցների անգործության մասին ահազանգել ՄԻՊ գրասենյակ՝ 116 հեռախոսահամարով: Ձեր գիշերային անդորրը պաշտպանված կլինի, եթե Դուք ինքներդ վերոնշյալ կարգով ձեռնամուխ լինեք դրա պաշտպանությանը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Կոտայքի մարզում. «Շանգրի-Լա»-ի հարեւանությամբ կա 1 զոհ, 2 վիրավոր. ավտոմեքենան վերածվել է մետաղե ջարդոնի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	0 - 3 + 8 + 11
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +11 + 14
Գեղարքունիք	0 - 3 + 7 + 11
Լոռի	0 + 3 + 10 + 13
Տավուշ	+ 1 + 3 + 11 +14
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 6 + 9
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 7 +10 + 15

Արարատ	+ 5 + 8 +13 + 16
Արմավիր	+ 7 + 9 +15 + 18
Վայոց ձորի լեռներ	0 - 3 + 6 + 9
Վայոց ձորի նախալեռներ	+ 4 + 8 +14 + 18
Սյունիքի լեռներ	0 - 3 + 5 + 8
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +13 + 16
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 +20 + 23
Երեւան	+ 5 + 7 +15 +17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **07.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*